Doi: 10.56737/2953-7843-2025.11-100

ԼԻԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄԸ[1]

Նահատակված սրբոց մասունքների գյուտը մեծ իրադարձություն է: Այդ մասին պատմություններն ու ավանդազրույցները երբեմն հյուսվել են հավատքի նվիրյալի վախճանից անմիջապես հետո, վկայվել գրավոր հուշարձաններով: Հայտնաբերված եւ պաշտամունքի առարկա դարձած բազմաթիվ մասունքների շարքում Սուրբ Ստեփանոսի նշխարներն առանձնանում էին իրենց բացառիկ ազդեցությամբ: Նահատակի պաշտամունքի լայն տարածումը դեռեւս մինչեւ 415 թ. ձեւավորել էր մի հանրային-կրոնական միջավայր, որը ոչ միայն նպաստեց մասունքների գյուտի վերաբերյալ բարի լուրի լայն արձագանքին, այլեւ հիմք հանդիսացավ դրանց հանդեպ առանձնակի նախանձախնդիր վերաբերմունքի ձեւավորման համար[2]: Սրբազան մասունքների առկայությունը որեւէ եկեղեցում էապես խթանում էր ուխտավորների հոսքը՝ դրանով իսկ բարձրացնելով հոգեւոր հաստատության հեղինակությունն ու ազդեցությունը: Սա հանգեցնում էր միջեկեղեցական յուրօրինակ մրցակցության, ինչով էլ պայմանավորված էր մասունքների գյուտի վերաբերյալ լուրերի արագ տարածումը: Սուրբ Ստեփանոսի նշխարները գրեթե անմիջապես մասնատվեցին եւ տարածվեցին Միջերկրածովյան ավազանի քրիստոնյա հավատացյալների շրջանում[3]: Մասունքների տարածումը հանգեցրեց Սուրբ Ստեփանոսի համընդհանուր պաշտամունքի փոփոխության՝ այն հարստացնելով նյութական եւ ծիսակարգային նոր տարրերով: Այս գործընթացը նոր լիցք հաղորդեց նահատակի կերպարի շուրջ ձեւավորված կրո-

---

[1]* *Ստացվել է՝ 16.10.2025, գրախոսվել է՝ 21.10.2025: էլ. հասցե՝* lian19921992@mail.ru:

[2] R. Wiśniewski, The Beginning of the Cult of Relics. Oxford: Oxford University Press, *2019, էջ 105*

[3] *«Ստեփանոսի մասունքները սկսեցին ճանապարհորդել իրենց հայտնաբերումից գրեթե անմիջապես հետո, սկզբում Հյուսիսային Աֆրիկա եւ Մինորկա, իսկ մի քանի տարի անց՝ Կոստանդնուպոլիս»* (Severus of Minorca: Letter on the Conversion of the Jews. edited and translated by Scott Bradbury, Oxford Early Christian Texts. Oxford: Clarendon, *1996., էջ 23)*:

նական ընկալումներին՝ առավել խորացնելով դրա հանդեպ եղած հետաքրքրությունն ու հոգեւոր եռանդը։

Սուրբ Ստեփանոսի մասունքների գյուտի վերաբերյալ վկայությունը տարածվել է Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսի հեղինակած Սուրբ Ստեփանոսի հայտնությունը[4] աշխատության միջոցով։ Այն իրենից ներկայացնում է շրջաբերական նամակ՝ ուղղված «Հիսուս Քրիստոսի բոլոր սուրբ եկեղեցիներին»։ Փաստաթղթի հիմնական նպատակն էր հրապարակայնացնել նահատակի մասունքների հայտնաբերման փաստը եւ վավերացնել դրանց սրբադասումը (կանոնացումը) քրիստոնեական աշխարհում[5]։ Հայտնությունը Սուրբ Ստեփանոսին ներկայացնում է որպես Երուսաղեմի առանձնահատուկ հովանավոր, ինչը միաժամանակ հիմնավորում է քաղաքի եւ նրա գահակալ եպիսկոպոսի բացառիկ կարգավիճակը։ Գրության մեջ Երուսաղեմի եպիսկոպոսը դիտարկվում է որպես Սուրբ Ստեփանոսի հրաշագործ զորության միակ միջնորդը՝ «այն լիազորված անձը», որին վերապահված է նահատակի մասունքների գյուտի եւ դրանց միջոցով տիեզերական եկեղեցուն սպասավորելու առաքելությունը։ Աշխատությունն ընդգծում է Երուսաղեմի՝ որպես մասունքների նախասահմանված հանգրվանի նշանակությունը՝ քաղաքը դիտարկելով որպես այդ սրբազան զորության հաղորդման բացառիկ կենտրոն[6]։ Արդյունքում, վերաձեւվում է աստվածաշնչյան Ստեփանոսի կերպարը՝ նրան ներկայացնելով որպես «անտեսանելի, երկնային հովանավոր»[7], որի երկրային ստվերն է եպիսկոպոսը, որ մասունքների միջոցով պետք է սուրբի հրաշագործ զորությունը բաշխի ողջ աշխարհին[8]։

Ինչպես նկատում է Փիթեր Բրաունը, «Հայտնության» առանցքային գաղափարն այն համոզմունքն է, որ մասունքների գյուտը հանգեցնում է «կատարյալ ազատագրման ու թողության» եւ խորհրդանշում է «խոնարհության պահեր»։ Սա հատկապես արտահայտվում է նրանում, որ մասունքների առկայությունն ստեղծում է նոր հնարավորություն-

---

[4] *Տես* «Revelatio Sancti Stephani»։

[5] *Տես* S. Vanderlinden, “Revelatio Sancti Stephani”, *1946, էջ 190։*

[6] *Թեեւ այդ ուժը գործում է աշխարհում, այն միավորում է երկրային համայնքները Աստծո ներքո մեկ քրիստոնեական համայնքում, որի մուտքի կետը երկրի վրա նահատակի գերեզմանն է»* (M. Roberts, Cult of the Martyrs, Michigan, *1993, էջ 27–28)։*

[7] *Պատրոնուս։*

[8] *Տես* P. Brown, The Cult of the Saints։ Its Rise and Function in Latin Christianity, *2*nd ed. Chicago։ University of Chicago Press, *2015, էջ 38։*

ներ՝ ուղղակի հաղորդակցություն հաստատելու նահատակի սրբազան զորության հետ[9]։ Հայտնության երկու խմբագրությունն էլ շեշտադրում են այս հանգամանքը՝ դա դիտարկելով մասունքների գյուտի պատմական եւ հոգեւոր համապատկերում։ Յուրաքանչյուր տարբերակում գյուտը ներկայացվում է որպես մարդկության համար օրհասական ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձություն։ Ըստ հեղինակների՝ մարդկային մեղքերի ծայրահեղ աճը հանգեցրել էր համաշխարհային երաշտի, որն սպառնում էր կործանել կյանքը։ Այս ճգնաժամային իրավիճակում Սուրբ Ստեփանոսի մասունքների հայտնությունը դիտվում է որպես աստվածային զորությամբ օժտված միակ ընծա, որ ի զորու է կանխելու մոտալուտ աղետը եւ ապահովելու սուրբի հրաշագործ միջնորդությունը[10]։

Սույն պատումի առանցքային գործող անձը Լուկիանոս երեցն է, որը, ըստ Ա. եւ Բ. խմբագրությունների, երեք հաջորդական տեսիլքների միջոցով իրազեկվում է Սուրբ Ստեփանոսի նշխարների գտնվելու վայրի մասին։ Համաձայն Ա. տարբերակի՝ առաջին հայտնությունը տեղի է ունեցել 415 թ. դեկտեմբերի 3-ին՝ «գիշերվա երրորդ ժամին»։ Այս հանգամանքը Լուկիանոսին վերապահում է սրբազան գաղտնիքի առաջնային կրողի եւ միջնորդի դերը, ինչը վճռորոշ նշանակություն ունի մասունքների գյուտի վավերականացման գործընթացում»[11]։ Եւ ահա նիրհելու ընթացքում Լուկիանոսին հայտնվում է մի տարեց կերպար՝ օժտված «քահանայական արժանապատվությամբ»։ Նկարագրության մեջ շեշտվում են նրա խորհրդանշական հատկանիշները. երկար մորուքը, ձեռքի ոսկե գավազանը եւ ոսկեկերտ խաչերով զարդարված սպիտակ հանդերձը։ Այս պատկերագրական մանրամասները միտված են ընդգծելու հայտնվող անձնավորության բարձր հոգեւոր կարգավիճակն ու հեղինակությունը՝ նրան ներկայացնելով որպես երկնային պատգամաբեր[12]։ Երեք անգամ իր գավազանով Լուկիանոսին դիպչելուց հետո՝ «ծերունին» կանչում է. «Լուկիանո՛ս, Լուկիա՛ն ... Գնա՛ այն քաղաքը, որը կոչվում է Աելիա, այսինքն՝ Երուսաղեմ, որտեղի եպիսկոպոսն է սուրբ

---

[9] *Տե՛ս* P. Brown, Cult of the Saints, *էջ 92։*

[10] *Տե՛ս* Vanderlinden, *նշ. աշխ., էջ 203, 207 եւ Բ., էջ 18, 26։*

[11] *Անդ, էջ 192, 193, Բ.-ն եւս հաստատում է շաբաթվա նույն օրը (ուրբաթ) եւ ժամը, սակայն չի նշում ամսաթիվը կամ տարին։*

[12] *Տե՛ս* Vanderlinden, *նշ. աշխ., Ա., էջ 194։*

Հովհաննեսը։ Ասա՛ նրան. «Փութո՛վ բաց արա մեր տապանը, որտեղ մեր մասունքներն անտարբերության են մատնված։ Մեր միջոցով Աստված, Քրիստոսն ու Սուրբ Հոգին կբացեն իրենց ողորմության դուռը այս աշխարհում, քանզի աշխարհը վտանգի մեջ է ամենօրյա բազմաթիվ մեղքերի պատճառով»[13]։

Տեսիլքի «ծերունին» նույնացվում է պատմական Գամաղիելի հետ, որը, համաձայն Նոր Կտակարանի, Երուսաղեմում եղել է Պողոս առաքյալի ուսուցիչը (հմմտ. Գործք ԻԲ. 3)։ Սրբախոսական այս ավանդության մեջ նա պատկերվում է որպես քրիստոնեական մկրտություն ընդունած անձ, ինչը նրան տալիս է առանձնահատուկ հեղինակություն՝ որպես հուդայականության եւ քրիստոնեության միջեւ կապող օղակ եւ սրբազան մասունքների պահապան[14]։ Ծերունին նպատակաուղղված կերպով շեղում է Լուկիանոսի ուշադրությունը սեփական անձից եւ թաղման վայրից՝ սահմանելով հստակ սրբաբանական առաջնահերթություններ։ Նա նշում է, որ իր հետ թաղված են անձինք, որոնք «առավել արժանի են մեծարման», հատկապես՝ «իմ տեր Ստեփանոսը, որին քարկոծեցին Երուսաղեմի քահանայապետներն ու հրեաները»։ Այս ձեւակերպմամբ բնագիրը հաստատում է Սուրբ Ստեփանոսի նախապատվությունը, եւ նրա բացառիկ դիրքը նահատակների շարքում՝ միաժամանակ ընդգծելով Գամաղիելի դերը՝ որպես նախավկայի պաշտամունքի վկայողի եւ միջնորդի[15]։ Գամաղիելը գիշերը կազմակերպում է մարմնի տեղափոխումը Կեփար Գամալայում (Գեւղն Գամաղիէլի) գտնվող իր անձնական կալվածք, որտեղ քառասուն օրվա սուգից հետո թաղում է[16]։ Տեսիլքի ավարտին Գամաղիելը մատնանշում է գերեզմանում ամփոփված եւս երկու անձի՝ Նիկոդեմոսին եւ նրա որդուն՝ Աբիբասին։ Պատումը Նիկոդեմոսին ներկայացնում է որպես մի անձի, որին հրեաները հալածել էին քրիստոնեական մկրտություն ստանալու պատճառով, իսկ Աբիբասին բնութագրում է որպես հավատքի նվիրյալ հետեւորդ։ Այս կերպարների ներառումը պատումի մեջ միտված է ընդգծելու Կեփար-Գամալայի գերեզմանատան՝ որպես նվիրական անձանց միասնական հանգստարանի նշանակությունը, որտեղ Սուրբ Ստե-

---

[13] *Տե՛ս* Vanderlinden, *նշ. աշխ., էջ 192։*

[14] *Տե՛ս* Vanderlinden, *նշ. աշխ., Ա., էջ 198–199, Բ., էջ 199։*

[15] *Տե՛ս* Vanderlinden, *նշ. աշխ., Ա., էջ 195, Բ., էջ 195։*

[16] *Տե՛ս* Vanderlinden, *նշ. աշխ., Ա., 11 (*“et poni eum in meo monumento novo”*) եւ Բ., էջ 196 (*“et deponite eum in monumento meo novo”*)։*

փանոսի նշխարներն զբաղեցնում են կենտրոնական դիրք[17]։ Գամաղիելը նաեւ ցույց է տալիս տապանի գտնվելու վայրը. ըստ նրա մասունքները գտնվում են մերձակա դաշտում, որը կոչվում է «Դելագաբրի», եւ այն լատիներենով բացատրում է որպես («Աստծու մարդկանց»)[18]։

Արթնանալով, Լուկիանոսը վախի ու անորոշության մեջ աղոթում է՝ սպասելով, որ տեսիլքը կրկնվի երկրորդ եւ երրորդ անգամ, որպեսզի ապացուցվի, որ առաջինը պատրանք չէր։ Հաջորդ ուրբաթ՝ դեկտեմբերի 10-ին, գիշերվա նույն ժամին, ինչպես նախորդում, Գամաղիելը հայտնվում է քահանային՝ կշտամբելով նրան իր թերահավատության եւ անգործության համար։ Գամաղիելը Լուկիանոսին ներկայացնում է տեսիլքը՝ բացահայտելով դամբարանի մարմինների դասավորությունը։ Բ. տարբերակում Ստեփանոսի թաղման արկղը մյուսներից տարբերվում է «ամենագեղեցիկ վարդերի» առատությամբ, որոնք «հորդում են» տապանից դուրս[19]։

Լուկիանոսն աղոթում եւ ծոմ է պահում եւս յոթ օր՝ վերջին մի տեսիլք աղերսելով։ Ի վերջո, ամսվա երրորդ ուրբաթ օրը՝ դեկտեմբերի 17-ին, զայրույթով լցված Գամաղիելը վերջին անգամ է հայտնվում քահանային[20]։ Բ. տարբերակում այն պնդումն է, թե տեսիլքներին ուշադրություն չդարձնելով՝ Լուկիանոսը երկարացրել է աշխարհի տառապանքը[21]։ Երազից արթնանալով՝ Լուկիանոսը վերջապես կատարում է հանձնարարվածը եւ պատմում է տեսիլքները Հովհաննես եպիսկոպոսին ու հոգեւորականներին։ Հովհաննեսի ժամանումից հետո թաղման արկղերը բացվում են, եւ տարածվում է գերբնական մի բուրմունք, այսպես կոչված «բոյրն սրբութեան»։ Հետեւում են բժշկություններ[22], որոնք հավաքված ամբոխի համար

---

[17] *Տես* Vanderlinden, *նշ. աշխ., էջ 200–201։*

[18] *Տես* «Virorum Dei», *Vanderlinden, նշ. աշխ., էջ 201։*

[19] *Տես* Vanderlinden, *նշ. աշխ., Բ., էջ 201։*

[20] *Տես* Vanderlinden, *նշ. աշխ., Ա., էջ 206։*

[21] *Տես* Vanderlinden, *նշ. աշխ., Բ., էջ 207։*

[22] *Տես* H. Méndez, The Cult of Stephen in Jerusalem։ Inventing a Patron Martyr, Oxford, *2023, էջ 227–229։*

Շատ մարդիկ եկան Երուսաղեմից եւ շրջակա գյուղերից։ Եկածների մեջ կային տարբեր հիվանդություններից տառապողներ՝ կույրեր, հաշմանդամներ, դիվահարվածներ, մարմինները լեցուն վարակներով ու խոցերով, եւ նրանք բոլորը բժշկվեցին։ Բժշկվածների թիվը հասնում էր յոթանասուն երեքի։ Այդպես, վերցնելով չորս սրբերի մասունքները, սաղմոսների եւ այլ սուրբ երգերի երգեցողությամբ տեղափոխեցին եւ դրեցին Սիոնի սուրբ եկեղեցում։ Жития святых по изложению свт. Димитрия Ростовского, Перенесение мощей святаго Перв- омученика и Архидиакона, *2023, էջ 9*

հաստատում են գտածոյի իսկությունն ու նշանակությունը[23]։ Ա. տարբերակում նախատեսվում է Ստեփանոսի մասունքները տեղափոխել[24]։ Դա տեղի է ունենում մի քանի օր անց՝ դեկտեմբերի 26-ին։ Եւ Ա. եւ Բ. դեպքերում սրբության բույրի տարածումը եւ հաջորդող բժշկությունները կապված են հատկապես Ստեփանոսի մասունքների հայտնաբերման հետ[25]։

Բազմաթիվ այլ զորություններից հետո Սուրբ Ստեփանոսը գովաբանվում է նաեւ մարդկանց երաշտից ազատելու համար[26]։

Բերքն ու բարեբերությունը հովանավորելու նրա զորության արձագանքն է լեհական ժողովրդական սովորույթներից հայտնի օրինակը։ Դեկտեմբերի 26-ին Ս. Ստեփանոսի տոնին, հավատացյալները վարսակ էին բերում նրա անունը կրող եկեղեցիներ, պատարագի վերջում քահանաներն օրհնում էին սերմերը՝ խնդրելով սուրբին, որ «առատ բերքի զորություն շնորհի սերմերին»[27]։ Ծեսն առավել տպավորիչ դարձնելու նպատակով եկեղեցու վերնատնից (երգչախմբի համար նախատեսված հատվածից) քահանայի եւ հավատացյալների վրա սիսեռի կամ լոբու հատիկների հետ խառնած վարսակ էին շաղ տալիս։ Այս համադրությունը պատահական չէր. ավելի ծանր հատիկների հավելումը նպատակ ուներ մեծացնելու հարվածի զգացողությունը՝ խորհրդանշական կերպով վերակենդանացնելով Նախավկայի քարկոծման տեսարանն ու նահատակության հիշողությունը։ Այսպիսով հարվածի ուժն ու սերմերի տարափը խորհրդանշում էին սուրբի չարչարանքների պատմությունը։ Այս սովորույթը գործել է մինչեւ 1960-ական թթ.[28]։ Եկեղեցում վարսակի օրհնությունը պահպանվել է մինչ օրս, սակայն «հատիկով» միմյանց ցողելու ծեսը վերանում է։ Ժողովրդական համոզմունքների համաձայն, օրհնված վարսակը ձեռք է բերել հատուկ ուժ եւ օգտագործվել ոչ միայն որպես սերմ, այլեւ որպես սնունդ եւ դեղամիջոց կենդանիների համար։ Օրհնած վարսակը տուն էին տանում եւ

---

[23] *Տե՛ս* Vanderlinden, *նշ. աշխ., Ա., էջ 214։*

[24] *Տե՛ս* Vanderlinden, *նշ. աշխ., Ա., էջ 214։*

[25] *Ա.-ում սրբության հոտն ազատվում է հենց այն ժամանակ, երբ բացվում է Ստեփանոսի թաղման տարան* [Vanderlinden, *նշ. աշխ., 214*]*։ Բ.-ում այն ազատ է արձակվում, երբ Ստեփանոսի մասունքները հայտնաբերվում են գերեզմանի արեւելյան մասում՝ առաջացնելով երկրաշարժ։ Բ.-ն Ա.-ից տարբերվում է նաեւ նրանով, որ տեքստում պատմված բոլոր հրաշքները ուղղակիորեն կապում է հոտի հետ։* Vanderlinden, *նշ. աշխ., էջ 215։*

[26] *Տե՛ս* Vanderlinden, *նշ. աշխ., Ա., էջ 216–217։*

[27] *Տե՛ս* Z. Kupisiński, Dzień świętego Szczepana w religijności i kulturze ludowej w Polsce, Tom LXVI, zeszyt *9 –2019, էջ 127–139։*

[28] *Տե՛ս* Z. Kupisiński, *էջ 132։*

խառնում գարնանացանի համար նախատեսված հացահատիկի հետ՝ լավ բերք ապահովելու եւ արտը կարկուտից ու բնական աղետներից պաշտպանելու համար։ Սուրբ Ստեփանոսի տոնի ժողովրդական ծիսակարգում առանցքային տեղ էր զբաղեցնում հացահատիկի կիրառումը. թե՛ եկեղեցի տանող ճանապարհին, թե՛ պատարագի ավարտին հավատացյալները վարսակ էին շաղ տալիս միմյանց վրա։ Այս սովորույթն ուներ նաեւ հանրային հետնախորք. ամուրի երիտասարդներն այն օգտագործում էին որպես սիրո արտահայտման եւ նախընտրելի օրիորդներին ուշադրություն մատուցելու միջոց։ Կելցեի[29] շրջանի ազգագրական տվյալների համաձայն՝ հագուստի վրա հայտնված հացահատիկի քանակը համարվում էր աղջկա հանրային ընկալման եւ ժողովրդականության յուրօրինակ չափանիշ. առավելագույն քանակությունը վկայում էր համայնքային սիրո մասին, մինչդեռ դրա բացակայությունն ընկալվում էր որպես անտեսվածության նշան[30]։

Քրիստոնեական հնագիտության եւ վարքաբանության ակնառու հետազոտող Վիկտոր Սաքսերը պատկերավոր կերպով նկարագրում է Սուրբ Ստեփանոսի մասունքների հայտնաբերմամբ ծագած ոգեւորության «մակընթացային ալիքը», որն այդ շրջանում համակել էր ողջ Միջերկրածովյան աշխարհը[31]։ Հայտնաբերմանը հաջորդած տասնամյակներում Ստեփանոսի մասունքները «ճանապարհվեցին» այլ տարածաշրջաններ, ընդ որում՝ բոլոր երկրներն ու եկեղեցիներն էին փորձում սրբության նշխար ձեռք բերել։

Աստվածաշնչագետ, Ստեփանոսի մասունքների հայտնության ամենակարեւոր քննական հրատարակություններից մեկի աշխատասիրող Էռնստ ֆոն Դոբսչուտզի[32] հետազոտությունների շնորհիվ հայտնի է դարձել հետեւյալ պատումը. Սուրբ Ստեփանոսի մասունքները տարվել են Արեւմուտք, եւ դրանցից որոշները տեղափոխվել են Ուզալիս[33] քաղաքի եկե-

---

[29] Պատմական Միջին Լեհաստանի (կամ Սվենտոկշիսկյան վոյեւոդության) կենտրոնը։ Այս տարածաշրջանը հայտնի է իր հնագույն քրիստոնեական ավանդույթներով եւ ժողովրդական հավատալիքների կայունությամբ։

[30] Տե՛ս Z. Kupisiński, *էջ 133։*

[31] Տե՛ս V. Saxer, Morts, martyrs, reliques en Afrique chrétienne aux premiers siècles. Paris։ Beauchesne, *1980, էջ 16–25։*

[32] Տե՛ս E. von Dobschutz, Christusbilder; Untersuchengen zur christichen legend, TU *18;* Leipzig Hinrichz, *1899, էջ 35–37)։*

[33] Ուզալիսը հռոմեական Աֆրիկայի պրոկոնսուլարիս էր, որը դարձավ քրիստոնեական եպիսկոպոսություն, եւ ընդգրկված էր Կաթոլիկ եկեղեցու տիտղոսավոր եպիսկոպոսություն-

ղեցի։ Այստեղ Սուրբ Ստեփանոսի մասունքները հանդես են գալիս որպես ապավեն, պաշտպանական միջոց քաղաքի բնակիչներին ահաբեկող սատանայական ուժերի դեմ։ Այս դիմակայության արդյունքում արձանագրվում է սուրբի հաղթանակը, որ եւ պատկերագրվում է։ Հաջորդ օրը Ուզալիսի Սենոդուս սարկավագը մի անծանոթից ստանում է վարշամակ, որի վրա բազմերանգ ներկերով պատկերված էր նախավկայի հաղթանակը։ Սուրբը ներկայացված էր սատանային տապալած դիրքով՝ ուսին կրելով հաղթության խորհրդանիշը՝ խաչը։ Ուզալիսի բնակիչների համար այս պատկերը դիտվում էր որպես հրեշտակաստեղծ վավերագիր, որը հաստատում էր սուրբի հովանավոր զորությունը[34]։

Լատին աղբյուրների քննական վերլուծությամբ հայտնի Բոլլանդյան միաբանության անդամ Բոդուեն դե Գաֆիերը վեր է հանել միջնադարյան մի ինքնատիպ ավանդազրույց։ Ըստ այդ վեպի՝ դիվային ուժերը առեւանգել են մանուկ Ստեփանոսին՝ նրա փոխարեն թողնելով «փոխնորդ» էակ։ Այս դրվագը, որը ներթափանցել է սուրբի վարքաբանական շրջանակ, արտացոլում է միջնադարյան մարդու պատկերացումները սրբության եւ չարիքի մշտական պայքարի մասին, որն սկսվում է դեռեւս օրորոցից[35]։

Սուրբ Ստեփանոսի պատումին առնչվող մի շարք կարեւոր հատվածներ, որոնք պահպանվել են Երուսաղեմի եպիսկոպոսին վերագրվող ղպտիերեն վավերագրերում[36], արժանացել են հայտնի եգիպտագետ-բնագրագետներ Հենրի Մունիեի եւ Ֆրանսուազ Մորարի ուշադրությանը։ Նրանց իրականացրած հրատարակությունները հնարավորություն են տալիս վերականգնելու նախավկայի պաշտամունքի տարածման արեւելյան (ղպտիական) ավանդույթը, որն առանձնանում է իր ինքնատիպ մանրամասներով եւ աստվածաբանական շեշտադրումներով։ Ֆրանսուազ Մորարը, մանրամասն վերլուծելով վավերագրի բովանդակությունը, մատնանշում է մի ուշագրավ դրվագ. մի մարդ, որը թալանել էր Սուրբ Ստեփանոսի մատուռը, հանկարծակի հի-

---

ների ցանկում։ Այժմ նրա տեղում էլ Ալիան քաղաք եւ կոմունան է՝ Թունիսի Բիզերտե նահանգում։

[34] *Տե՛ս* E. von Dobschutz, *էջ 35- 37։*

[35] B. de Gaiffier, “Le diable voleur d’enfants. A propos de la naissance des saints Étienne, Laurent et Barthélemy,” in Homenaige a Antoni Rubió i Lluch (Miscel-lània d’Estudis literaris, històrics i linguistics, *2;* Barcelona: Biblioteca Balmés, *1936, էջ 1–26*

[36] BHO, *1093։*

վանդանում է եւ, գիտակցելով իր արարքի ծանրությունը, վերադառնում է նույն սրբավայրը՝ հայցելու նախավկայի բժշկությունն ու թողությունը։ Այս պատումը բացահայտում է սուրբի կերպարի մեկ այլ կարեւոր գործառույթ. նա հանդես է գալիս ոչ միայն որպես հրաշագործ բժշկող, այլեւ որպես բարոյական դաստիարակ, որի զորությունն ստիպում է հանցագործին առերեսվել սեփական մեղքին։ Սուրբի միջնորդությամբ տեղի ունեցող բժշկությունը տվյալ համապատկերում դիտվում է որպես աստվածային ողորմության դրսեւորում, որը հասանելի է միայն անկեղծ զղջման եւ առ սրբությանն ուղղված երկյուղածության միջոցով։ Գիշերվա կեսին կողոպտիչի առջեւ հայտնվում է նախավկա Ստեփանոսը եւ հանդիմանում նրան վատ արարքների համար։ Մարդը խոստանում է ապաշխարել եւ այլեւս մեղք չգործել։ Ստեփանոսը բժշկում է նրան, ապա վերադառնում է երկինք, իսկ բժշկվածը պատմում է իր տեսիլքը բոլորին։ Հատվածն ավարտվում է առաջին նահատակի գովաբանությամբ, որին հարում են Պետրոսն ու Հովհաննեսը[37]։ Հրատարակված հատվածների համաձայն՝ պատումի առանցքում Իսայ անունով վարդապետի տեսիլքն է, որը համայնքին հորդորում է միանալ հավաքական աղոթքին եւ փառաբանել հրեշտակներին ու սուրբերին, մասնավորապես՝ Ստեփանոսին եւ Հովհաննեսին։ Հ. Մունիեի ներկայացրած հաջորդ դրվագները բացահայտում են սուրբին որպես սրբավայրի անձեռնմխելիության պահապան. երբ մի չարագործ փորձում է թալանել մատուռի ոսկյա եւ արծաթյա սպասքը, տունդարձի ճանապարհին նրան է հայտնվում Սուրբ Ստեփանոսը՝ ահազդու ձիավորի կերպարանքով։ Այս ինքնատիպ հայտնությունն ստիպում է հանցագործին խոստովանել մեղքը՝ ընդգծելով նախավկայի զորությունը ոչ միայն որպես բարեխոսի, այլեւ որպես երկնային արդարադատություն սահմանողի, որն ի զորու է բացահայտել անգամ ամենածածուկ անօրինությունը։ Գողն առաջարկում է կիսել հափշտակվածը, սակայն Ստեփանոսն ստիպում է նրան մատուռ վերադարձնել ամենը։ Գողն օգնություն է կանչում, շրջակայքի մարդիկ մոտենում են եւ տեսնում գողին, սակայն ոչ Ստեփանոսին, որը մնում է անտեսանելի։ Վերջապես, երբ գողը զղջալով ապաշխարում է, Ստեփանոսը ներում է նրան եւ

---

[37] *Տես* Fr. Bovon, The Dossier on Stephen, the Frist Martyr, The Harvard Theological Review Vol. *96*, No. *3*, Jul., *2003*, *էջ 307*։

ազատում։ Իսկ ապաշխարած գողը մնացյալ կյանքը ծառայում է եկեղեցուն՝ որպես սուրբի մատուռի պահապան։ Վավերագիրը, ինչպես եւ մյուսը, ավարտվում է Սուրբ Ստեփանոսի գովաբանությամբ [38]։

Մասունքների ներթափանցումը տարբեր շրջաններ նշանակալի հետք թողեց հատկապես հինգերորդ դարի սրբախոսության, նյութական մշակույթի, ուխտագնացության օրինակների եւ տեղական հրեաքրիստոնեական հարաբերությունների վրա։ Նահատակի մասունքների հայտնաբերումը նշանավորեց նրա տեղական պաշտամունքի զարգացման ավելի աշխույժ փուլի սկիզբը, որի ընթացքում առավել էր բարձրանում Ստեփանոսի հեղինակությունը։

Ինչպես նշում է ժամանակակից կրոնագետ Դեյվիդ Ֆրանկֆուրթերը, Ե. դարում սրբավայրերը, հաճախ վիթխարի բազիլիկների տեսքով, վերածվել էին քաղաքային ինքնության առանցքային խորհրդանիշների՝ վկայելով համայնքի սերտ կապն ու նվիրվածությունն այն երեւելիներին, որոնց ընծայված էին կառույցները։ Տաճարներն ու մատուռները մարմնավորում էին տեղական ինքնության հայեցակարգը՝ հստակորեն ընդգծելով այն նվիրյալների շրջանակը, որոնց տվյալ համայնքը մեծարում էր որպես իր բացառիկ երկնային հովանավորների։ Սրբավայրը, այսպիսով, դառնում էր յուրօրինակ հոգեւոր կայան, որտեղ քաղաքի հանրային կյանքը սերտաճում էր սրբազան պաշտամունքի հետ, իսկ հավատքի նվիրյալների հարգն ավելի էր մեծանում նրանց սրբավայրերի ճարտարապետական վեհությամբ, քաղաքային համապատկերում դրանց կենտրոնական դիրքով եւ նույնիսկ բուն նահատակության տոնից դուրս իրականացվող բազմազան ծիսական կիրառություններով[39]՝ չխոսելով արդեն քաղաքի իշխանությունների, հոգեւորականների հեղինակության բարձրացման, ուխտավորների քանակի եւ քաղաքի բնակչության բարձրացող ինքնագնահատականի մասին։

Սուրբ Ստեփանոսի մասունքների մեծ մասը տարվել է Երուսաղեմի սուրբ Սիոն եկեղեցի եւ այնտեղից տեղափոխվել Երուսաղեմից հյուսիս գտնվող Ստեփանոսի քարկոծման եկեղեցի։ Այդ եկեղեցին հետագայում փոխարինվեց բազիլիկով, որ կառուցեց Եւդոքիա կայսրուհին 460 թ., սա-

---

[38] *Տե՛ս* Fr. Bovon, *էջ 307–308։*

[39] *Տե՛ս* D. Frankfurter, Christianizing Egypt։ Syncretism and Local Worlds in Late Antiquity. Princeton, NJ։ Princeton, *2017, էջ 106։*

կայն այն ավելի ուշ ավերվեց։ Երբ տաճարի ավերակները 1882 թ. հայտնաբերվեցին, դրանց վրա կառուցվեց ներկայիս Սուրբ Ստեփանոսի բազիլիկը՝ Աստվածաշնչյան դպրոցի հովանավորությամբ։ Ըստ եկեղեցական ավանդության՝ Սուրբ Ստեփանոսի նահատակության (քարկոծման) վայրը Երուսաղեմի արեւելյան մասում է՝ Կեդրոնի հովտում, որը գտնվում է Տաճարի լեռան եւ Ձիթենյաց լեռան միջեւ։ Այս իրադարձության կապակցությամբ Երուսաղեմի Հին քաղաքի արեւելյան դարպասը կոչվել է նաեւ Սուրբ Ստեփանոսի դարպաս, որ սակայն առավել հայտնի է որպես Առյուծների դարպաս[40]։ Ներկա տեղագրական կապը պատահական չէ. այն ուխտավորների համար ստեղծում է տեսանելի եւ շոշափելի երթուղի, որը միավորում է սրբի նահատակության վայրը քաղաքի ճարտարապետական կերպարի հետ՝ դարձնելով նրա պաշտամունքը Երուսաղեմի քաղաքային համայնապատկերի անբաժանելի մասը։ Սուրբ Ստեփանոսի մասունքների մի մասը 560 թ. տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, մյուս մասը՝ Հռոմ՝ Սան Լորենցո եկեղեցի[41], իսկ որոշ մասունքներ տարվեցին այլ եկեղեցիներ, որոնք հետագայում դարձան հայտնի սրբավայրեր։ Այդպիսի սրբավայրերից մեկը գտնվում էր Հյուսիսային Աֆրիկայում՝ Հիպպոյում, որտեղ Ս. Օգոստինոսը առանձնակի տարածեց Սուրբ Ստեփանոսի պաշտամունքը եւ պահանջեց, որ հանրային վկայություն տրվի նրա միջոցով կատարված հրաշքների մասին։ Նման հրաշագործ սրբավայրեր կային նաեւ Աֆրիկայի այլ տարածքներում, Կալամայում եւ Ուզալիում՝ Ուտիկայի մոտ գտնվող գաղութում[42], Մինորկա կղզում։ Իտալիայի Անկոնա քաղաքի սրբավայրում որպես մասունք պահվում էր մի քար, որը, ըստ ավանդության, օգտագործվել էր նախավկայի քարկոծման ժամանակ։ Սուրբ Ստեփանոսի պաշտամունքը լայն տարածում գտավ նաեւ Իտալիայի այլ նշանավոր քաղաքներում. Հռոմում նրան նվիրվեցին մի քանի սրբավայրեր, որոնցից հայտնի են Վիա Լատինայի վրա գտնվող բազիլիկը եւ Կելիան բլրի վրա վեր խոյացող Սանտո Ստեֆանո Ռոտոնդո եկեղեցին։ Պաշտամունքային կենտրոններ հիմնվեցին նաեւ Ռավեննայում եւ Նեապոլում։ 4-րդ դարի վերջից մինչեւ 5-րդ դարի կեսերը Կոստանդնուպոլսում կառուցվեցին սուրբի անունը կրող երեք

---

[40] *Համմտ.* Էմմ. Վրդ. Աթաջանեան, Գ. Մադոյեան, *Երուսաղէմի Հայոց սրբավայրերը, Մոսկուա, 2003, էջ 37։*

[41] *Իտալերեն՝* Cimitero Monumentale del Verano՝ *Հռոմի ամենահայտնի եւ պատմական նշանակություն ունեցող գերեզմանատունը։*

[42] *Տես* De Civitate Dei *22.8,* In Basic Writings of St. Augustine, v. *2,* New York, *1948, էջ 625–628։*

եկեղեցիներ, ինչը նշանավորեց նրա պաշտամունքի համընդհանուր տարածումը համայն կայսրության տարածքում[43]*։*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նահատակված սուրբերի մասունքների գյուտը վաղ քրիստոնեական աշխարհի կարեւորագույն հոգեւոր իրադարձություններից էր։ Հայտնաբերված բազմաթիվ նշխարների շարքում Սուրբ Ստեփանոս Նախավկայի մասունքներն առանձնանում են իրենց բացառիկ տիեզերական ազդեցությամբ։ Թեեւ սուրբի պաշտամունքը ձեւավորվել էր դեռեւս մինչեւ 415 թվականը (ինչը վկայված է Գրիգոր Նյուսացու եւ Ասթերիուսի քարոզներում), սակայն Լուկիանոս երեցի տեսիլքների միջոցով մասունքների հայտնաբերումը նոր եւ աննախադեպ լիցք հաղորդեց նրա փառքի տարածմանը։

Սուրբ Ստեփանոսի նշխարների հայտնությունը վերաձեւեց աստվածաշնչյան նահատակի կերպարը՝ նրան Երուսաղեմի տեղական մարտիրոսից վերածելով «անտեսանելի երկնային հովանավորի», որի զորությունը մասունքների միջոցով սփռվեց ողջ Միջերկրածովյան ավազանում։ Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսի «Շրջաբերական նամակը» վավերացրեց այս գյուտը՝ Երուսաղեմը հռչակելով սրբազան զորության հաղորդման բացառիկ կենտրոն, իսկ մասունքների առկայությունը եկեղեցիներում դարձավ հոգեւոր հեղինակության եւ ուխտավորների ներգրավման հիմնական գրավականը։

Լուկիանոսի տեսիլքներում Գամաղիելի հայտնությունը եւ տապանների բացման ժամանակ տարածված «բոյրն սրբության» ստեղծեցին մի սրբախոսական հիմք, որն ուղեկցվում էր բժշկություններով եւ բնական աղետներից (երաշտից) ազատվելու հրաշքներով։ Սուրբի զորության այս ընկալումը հետագայում տեղ գտավ ժողովրդական ծիսակարգերում, ինչպես, օրինակ, լեհական ավանդույթում վարսակի օրհնության եւ միմյանց «քարկոծելու» ինքնատիպ սովորույթի մեջ, որտեղ սուրբը հանդես է գալիս որպես բերքի եւ բարեբերության հովանավոր։

Ինչպես նկատում է Դեյվիդ Ֆրանկֆուրթերը, Ե. դարում Սուրբ Ստեփանոսի անունով կառուցված հոյաշեն բազիլիկները՝ Հռոմից (Սանտո

---

[43] *Տե՛ս* The New Catholic Encyclopedia, vol. *13, 2*nd ed., Gale, *2003, էջ 509–512։*

Ստեֆանո Ռոտոնդո) մինչեւ Կոստանդնուպոլիս, Հիպպո եւ Ուզալիս, դարձան քաղաքացիական ինքնության առանցքային խորհրդանիշներ։ Սուրբի կերպարը հարստացավ նաեւ բարոյական դաստիարակի եւ արդարադատություն սահմանողի գործառույթներով, ինչը վկայված է զպտիական վավերագրերում եւ Օգոստինոս Երանելու «Աստծու քաղաքի մասին» աշխատության մեջ։

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ Սուրբ Ստեփանոսի մասունքների գյուտը հանգեցրեց միջնադարյան քրիստոնեական աշխարհի հոգեւոր համապատկերի ամբողջական վերափոխմանը։ Նախավկայի պաշտամունքը, միահյուսելով աստվածաբանական վարդապետությունը, ժողովրդական հավատալիքները եւ ճարտարապետական վեհությունը, ստեղծեց մի սրբազան ցանց, որի հետքերն առ այսօր պահպանվում են Երուսաղեմի տեղագրության մեջ, եւրոպական բազմաթիվ բնակավայրերի անվանումներում եւ քրիստոնեական ծիսական կյանքում։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ս. Ստեփանոս Նախավկա, նահատակ, մասունքներ, Լուկիանոս, հրաշագործ սուրբ, ուխտագնացություն։

РЕЗЮМЕ

Формирование культа мощей святого первомученика Стефана неразрывно связано со становлением раннехристианской культуры мученичества. Особый импульс этот процесс получил в V веке – с обретением гробницы святого и последовавшим целенаправленным распространением реликвий. Образу Стефана была обеспечена широкая известность ещё через библейское повествование, проповедническую и агиографическую литературу, что подготовило благодатную духовную и общественную почву для принятия мощей.

Обретение реликвий и их передача различным церквям преобразили само существо почитания святого: молитвенное поминовение обрело новое измерение – религиозного опыта, основанного на непосредственном материальном присутствии святыни. Мощи стали средоточием паломничества, источником

чудотворных преданий и побуждением к возведению новых храмов, неуклонно укрепляя авторитет и духовное влияние принявших их общин.

В итоге культ мощей святого первомученика Стефана занял одно из центральных мест в общехристианской памяти о мучениках, органично соединив историческое предание, освящённую материальность реликвии и живой коллективный религиозный опыт.

SUMMARY

The formation of the cult of Saint Stephen the Protomartyr's relics is closely linked to the development of early Christian martyrdom culture and received a special impetus in the 5th century following the discovery of his tomb and the organized distribution of his relics. Even prior to this, St. Stephen was already widely known thanks to the biblical narrative, homiletic and hagiographic literature, which created a favorable spiritual and social environment for the acceptance of the relics.

The discovery and transfer of relics to various churches transformed St. Stephen's veneration, turning it from simple remembrance into a form of religious experience based on physical presence. The presence of relics contributed to the growth of pilgrimages, spread of stories about miracles, as well as construction of new churches, increasing the authority and spiritual influence of local communities.

As a result, the cult of St. Stephen the Protomartyr's relics became one of the key elements of the pan-Christian remembrance of martyrdom, combining historical memory, material sanctity, and collective religious experience.